## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հուլիսի 1-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վրթանես քհն. Գալայճյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ տեր հայրը իր շնորհակալական խոսքն է ուղղում Վեհափառ Հայրապետին՝ նշելով, որ Նրա բարեհաճ կարգադրությամբ ամեն տարի ԱՄՆ-ից Մայր Աթոռ և մայր հայրենիք են գալիս, որպես ուխտավոր, Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության անդամներ:

* * *

**Հուլիսի 8-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ առաւել խորին խորհրդով խնդայ քան զարարատեանն բարձր Մասիս. քանզի ի նմա հանգեաւ սուրբն Գրիգորիոս տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան ազանց» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

**Հուլիսի 10-ին, երեքշաբթի.**—Այսօր Բյուրականի հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

* * *

**Հուլիսի 12-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:**

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Բագրատ աբեղա Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի իցէ ծառայիցն այնոցիկ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ, զի գոտի ընդ մէջ ածցէ եւ բազմեցուցցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա» (Ղուկաս ԺԲ 37) բնաբանով:

*
* *

**Հուլիսի 15-ին, կիրակի.—Գիւտ տփոյ Սրբոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հուլիսի 19-ին, հինգշաբթի.**—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը և մայրավանքի պաշտոնեությունը, ղեկավարությամբ Վեհափառ Հայրապետի, Երևանի կոմպոզիտորների տան համերգային դահլիճում ներկա են լինում սփյուռքահայ ճանաչված երգչուհի Արաքս Սվաճյանի և իր դուստր դաշնակահարուհի Սեդա Գարագաշյանի համերգին, որը նվիրված էր շնորհալի երգչուհու երաժշտական գործունեության 55-ամյակին:

*
* *

**Հուլիսի 22-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդս ի վերայ խոտոյ. եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունս հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ, եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշակերտքն՝ ժողովրդոցն» (Մատթ. ԺԴ 19) բնաբանով:

*
* *

**Հուլիսի 24-ին, երեքշաբթի.**—Այսօր Բյուրականի հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

**Հուլիսի 29-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք» (Մատթ. ԺԷ 5) բնաբանով:

*
* *

**Օգոստոսի 1-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետը շուրջ մեկամսյա ամառային հանգստի է մեկնում Կիսլովոդսկի «Կրասնիե կամնի» առողջարան:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

**Օգոստոսի 5-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հակոբ քհն. Գյոքչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19) բնաբանով:

*
* *

**Նույն օրը,** Ս. Գայանե եկեղեցում, ի ժամ պատարագի, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի ձեռամբ սարկավագ է ձեռնադրվում Լևոն Քեսաբյանը:

* *
*

**Օգոստոսի 12-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողպաթյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ» կարգը՝ նախագահությամբ պատարագիչ սրբազանի:

*
* *

**Օգոստոսի 13-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ պատարագն է մատուցում Տ. Սերովբե քհն. Պետրոսյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

**Օգոստոսի 19-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու, տաս դու նոցա եւ կերակրին» (Սաղ. ՃԽԴ 15) բնաբանով:

*
* *

**Օգոստոսի 24-ին, ուրբաթ.**—Այսօր Վեհափառ Հայրապետը, Կիսլովոդսկի «Կրասնիե կամնի» առողջարանում հանգստանալուց հետո, վերադառնում է Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

**Օգոստոսի 26-ին, կիրակի.—Տօն գիտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քին. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ո՞չ գիտէի, կի մարմինք ձեր տաճար են հոգւոյն որ է ի ձեզ, զոր ունիքն յԱստուծոյ, եւ չէք անձանց տէր» (Ա Կորնթ. Զ 19) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 1-ին, շաբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը:

*
* *

**Սեպտեմբերի 2-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ սկիզբն սուրբ է, եւ վանգուածն, եւ եթէ արմատն՝ ապա եւ ոստքն» (Հռով. ԺԱ 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 5-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանի ընդունելության սրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հավաքույթ:

Քարոզաքննությունից հետո, Արգենտինայի հայ գաղթօջախի մասին խոսք է ասում Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը:

*
* *

**Նույն օրը** ԱՄՆ կատարած ուղևորությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին է վերադառնում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

*
* *

**Սեպտեմբերի 6-ին, հինգշաբթի.**—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում Մոսկվայում Լյուքսեմբուրգի արտակարգ և լիազոր դեսպան Գի դը Մյուիվերը և հասարակական գործիչ, Եվրոպական տնտեսական համագործակցության հաշվիչ պալատի անդամ Մարսել Մարտը իրենց հարգելի կանանց հետ:

Վեհարանում հարգարժան հյուրերին ընդունում է Հայոց Հայրապետը և ջերմ զրույց ունենում նրանց հետ:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը և հարգելի հյուրերը փոխանակում են հուշանվերներ:

Այնուհետև հյուրերն այցելում են Մայր տաճար և նրան կից եկեղեցական արվեստի թանգարան, որտեղ նրանց տրվում է մանրամասն բացատրություն հայ եկեղեցական արվեստի հնագույն նմուշների մասին:

*
* *

**Սեպտեմբերի 9-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Նույն օրը,** առավոտյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում եգիպտահայ ուխտավորների մի մեծ խումբ:

Վեհարանի ընդունելությանց սրահում Վեհափառ Հայրապետը ընդունում է հայ ուխտավորներին և զրույց ունենում նրանց հետ:

*
* *

**Սեպտեմբերի 10-ին, երկուշաբթի.**—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

**Նույն օրը.** երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

*
* *

**Սեպտեմբերի 14-ին, ուրբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Բուլգարիայի և Ռումինիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

*
* *

**Սեպտեմբերի 15-ին, շաբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

*
* *

**Սեպտեմբերի 16-ին, կիրակի.—Խաչվերաց:**
Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսում «Իսկ որովհետեւ հրեայք նշան հայցեն, եւ հեթանոսք իմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք զխաչեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն եւ հեթանոսաց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից եւ հեթանոսաց. զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» (Ա Կորն. Ա 22) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, ժամը 14.15-ին, Մայր Աթոռի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվում է սիրո ճաշկերույթ:

Սույն ճաշկերույթին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը և Մայր Աթոռի բարերարներ Ջորջ Քյուրքճյանը (Անգլիա), Վահե և Տորիս Չննոպյանները, Արմեն և Սիրանույշ Մեծատուրյանները (Արգենտինա):

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը ներկաներին ծանոթացնում է Մայր Աթոռի բարերարներին և տալիս Իր հայրական օրհնությունները: Այնուհետև Հայոց Հայրապետը գնահատանքով նշում է Վահե Չննոպյանի ազգանվեր գործունեությունը և նրան պարգևատրում «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Այս առթիվ իր սրտագին շնորհակալական խոսքն է ասում պարոն Վահե Չննոպյանը:

Ճաշկերույթն ավարտվում է ջերմ և խանդավառ մթնոլորտում:

*
* *

**Սեպտեմբերի 18-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում դիվանագիտական ներկայացուցչությունների Մոսկվայում հավատարմագրված ղեկավարները:

Վեհարանի ընդունելության սրահում նրանց ընդունում է Վեհափառ Հայրապետը և ջերմ զրույց ունենում բարեկամական մթնոլորտում:

Այնուհետև հյուրերը այցելում են Մայր Աթոռի եկեղեցական արվեստի թանգարանները:

*
* *

**Սեպտեմբերի 19-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթը նվիրված էր Տ. Գրիգորիս սրբազանի «Խաչվերաց»-ի տոնի առթիվ Մայր տաճարում արտասանած քարոզի քննարկմանը:

*
* *

**Նույն օրը** Բեյրութից ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածին է այցելում Տ. Գնել եպս. Ճերեճյանը:

*
* *

**Սեպտեմբերի 23-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Մայր Աթոռի բարերարներ նորոգ հանգուցյալ Սարգիս Քյուրքճյանի, Գեղամ Տանձիկյանի և Մայր տաճարի երգչախմբի մեներգչուհի Լուսինե Զաքարյանի մայր Վերոնիկա Զաքարյանի հիշատակին:

Հանգուցյալների հարազատներին ուղղված ցավակցական խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Սեպտեմբերի 30-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչին.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ի միւսանգամ քո գալստեանն յերևիլ սուրբ նշանիս. արժանի արա զծառայս քո վերստին նորոգման» (շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է մաղթանք՝ նվիրված Նորին Սուրբ Օծության գահակալության քսանիններորդ տարեդարձին:

Այնուհետև Վեհարանի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, տըրվում է ճաշկերույթ օրվա տոնակատարության առթիվ:

Ճաշկերույթին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, ինչպես նաև Բեյրութի Եկեղեցասեր Տիկնանց Հանձնաժողովի ատենապետուհի տիկին Անգինե Տանձիկյանը և Հ.Բ.Ը.Մ.-ի նախագահ Ալեք Մանուկյանի դուստր Լուիզ Սիմոնը:

Սույն ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը: